



ՎԱՆԱԶՈՐԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ «ՕՐՀՈՒՄ» ԿԵՆՏՐՈՆ
VANADZOR PUBLIC ENVIRONMENTAL
INFORMATION "AARHUS" CENTER

№ Վ-001/2013
24, հունիս, 2013թ.

ՀՀ ԱՌՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ԱԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Նալբանդյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 27-րդ, 27.1-րդ հոդվածների, ՀՀ կողմից վավերացված Օրհուսի համաձայնագրի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ Վանաձորի Օրհուս կենտրոնին տրամադրել տեղեկատվություն Վանաձոր, Ալավերդի, Ստեփանավան, Ախթալա, Թեղուտ և Շնող համայնքներում 2010 և 2011 թվականների

1. Օնկոլոգիական հիվանդություններ ունեցողների թիվը,
2. Մինչև 1 տարեկան մահացության թիվը,
3. Կյանքի միջին տևողությունը՝ կանանց և տղամարդկանց համար,
4. Ալերգիկ հիվանդություններ ունեցողների թիվը,
5. Թոքային հիվանդություններ ունեցողների թիվը:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկատվություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան է տրվում այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30 օրյա ժամկետ): Ուստի, խնդրում եմ տեղեկատվություն ստանալու մեր հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը:

Վերոհիշյալ տեղեկությունները կարող եք ուղարկել նաև էլեկտրոնային փոստով՝ info_vanadzor@aarhus.am հասցեով:

(Պատրաստ եմ վճարել մեզ տրամադրված տեղեկատվության պատճենահանման ծախսերը: Պատճենահանման հնարավոր ծախսերի համար խնդրում եմ նամակով մեզ տրամադրել համապատասխան հաշվեհամարը և պատճենահանման ծախսաչափը՝ սկսած 11-րդ էջից):



Կանխավ շնորհակալություն:

Վանաձորի բնապահպանական

տեղեկատվության հասարակական

Օրհուս կենտրոնի համակարգող



Պերճ Բոջուկյան